Գերմանական վարորդական իրավունք

Նրանց համար, ովքեր ապրում են Գերմանիայում, շատ կարևոր է ունենալ Գերմանական վարորդական իրավունք, հատկապես նրանց համար, ովքեր ապրում են փոքր քաղաքներում կամ գյուղերում, որտեղ հասարակական տրանսպորտը դժվար հասանելի է կամ ընդհանրապես հասանելի չէ: Այս հոդվածում դուք կգտնեք Գերմանիայում վարորդական իրավունքին վերաբերվող ձեզ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, ինչպես նաև խորհուրդներ Վարորդական իրավունք ստանալու թույլտվություն ձեռք բերելու կամ Վարորդական վկայական ունենալու դեպքում այն փոփոխելու պայմանների մասին:

1. Ինչպե՞ս կարող եմ Վարորդական իրավունք ստանալ:

Առաջին անգամ վարորդական իրավունք ստանալու համար հարկավոր է՝

- Գրանցվել ավտոդպրոցում:

- DRK- ում առաջին օգնության դասընթացին մասնակցել, արժեքը 35 եվրո:

- Տեսողության աստիճանի ստուգում ՝ արժեքը 10 եվրոյի սահմաններում :

- կացության թույլտվության և անձնագրի պատճենները

Կարևոր նշում.

Այն մարդիկ, ովքեր միայն «Duldung» ունեն, նույնպես կարող են

վարորդական իրավունք ստանալ:

2. Որքա՞ն արժե վարորդական վկայական ստանալը:

Իրականում, արժեքը տարբերվող է՝ ըստ անձի ունեցած գիտելիքների, դասընթացներին մասնակցելու հաճախականությունից: Արժեքը հաճախ կազմում է ավելի քան հազար եվրո, երբ վարորդական իրավունք չունեք և ցանկանում եք ունենալ: Դասընթացներին մասնակցությունը պարտադիր է բոլորի համար: Առկա են տեսական և գործնական դասընթացներ: Որոշ դասերընթացներ պարտադիր են, օրինակ մայրուղու վրա երթևեկելու ժամեր կամ գիշերային ժամեր: Ամեն ինչ կախված է Վարորդի հրահանգչից, վերջինս էլ որոշում է՝ ձեզ անհրաժեշտ վարորդական դասերի քանակը: Բայց եթե դուք արդեն ունեք ձեր երկրում ստացած Վարորդական իրավունք, դասաժամերն ու ծախսերը զգալիորեն կրճատվում են, քանի որ ձեզանից չի պահանջվում մասնակցել տեսական և գործնական բոլոր դասաժամերին: Տեսական քննությանը մասնակցելու արժեքը մոտ 25 եվրո է, իսկ գործնական քննության համար հարկավոր է վճարել մոտ 120 եվրո:

Կարևոր նշում.

Եթե գործազուրկ եք և աշխատանք եք փնտրում՝ Վարորդական իրավունքի վկայական ունենալը մեծացնում է ձեր շանսերը աշխատանքի շուկայում: Դուք կարող եք դիմում ներկայացնել Աշխատանքի կենտրոնում և ձեր գործերով պատասխանատու աշխատակցին խնդրել զբաղվել ձեզ գումարային աջակցություն հատկացնել վարորդական իրավունք ձեռք բերելու համար:

Ուշագրավ է այն փաստը, որ յուրաքանչյուր երկրի քաղաքացի իրավունք ունի Գերմանիայում իր երկրում ստացած վարորդական իրավունքով երթևեկել վեց ամիս: Այս ժամանակահատվածի լրանալուց հետո, քաղաքացին պետք է գրանցվի գերմանական Վարորդական վկայականի գրասենյակում, վկայականը փոխելու դիմումով:

Կարևոր նշում.

Երբեմն՝ փախստականի կարգավիճակ ստացած անձը Միգրացիայի դաշնային գրասենյակին է հանձնում անձի ինքնությունը հաստատող բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև, վարորդական իրավունքը: Այս ընթացքում դուք չեք կարող մեքենա վարել և հաճախ իշխանությունները փաստաթղթերը վերադարձնում են ապաստանի գործընթացի ավարտից հետո:

4. Որտե՞ղ և ինչպե՞ս կարող եմ գրանցել իմ վարորդական վկայականը:

Մինչև վեցամսյա ժամկետի լրանալը, դուք պետք է կապվեք ձեր քաղաքի վարորդական իրավունքի տրամադրող գրասենյակի հետ `Նոտարական ապոստիլի առկայությամբ թարգմանել ձեր վարորդական իրավունքը: Փնտրել ավտոդպրոց, գրանցվել՝ այնուհետև կարող եք մասնակցել տեսական և գործնական դասերի: Սովորաբար դասերը շատ ավելի քիչ են, քան երբ չունես Վարորդական իրավունքի վկայական: Սա նաև նշանակում է, որ ծախսերը շատ ավելի ցածր են:

5. Ո՞րն է տարբերությունը առկա Վկայականի փոփոխման և առաջին անգամ այն ձեռք բերելու միջև:

Տարբերությունն այն է, որ նրանք, ովքեր նոր են ձեռք բերել Վարորդական իրավունք, երկու տարի գտնվում են փորձաշրջանում: Այս ընթացքում նրանք գտնվում են հատուկ վերահսկողության ներքո և առավել խիստ են դիտարկվում նրանց կողմից թույլ տրված խախտումները: Սա չի վերաբերվում այն վարորդների, ովքեր արդեն իսկ երկար տարիների մեքենա վարելու փորձ ունեն:

Եթե այս ընթացքում գրանցվի երթևեկության լուրջ խախտում ինչպիսիք են՝

Ալկոհոլի, թմրանյութի առկայությամբ մեքենա վարելը,

Բարձր արագություն

Կարմիր լույսի տակ երթևեկել

Գիշերը առանց լույսարձակները միացնելու վարելը

ապա անձին կենթարկեն տուգանքի, ինչպես նաև կպարտադրեն խորացված ուսուցման և անցնել հոգեբանական քննություն: Փորձաշրջանը այս պարագայում կերկարաձգվի: Պահանջները չկատարելու դեպքում անձը կարող է զրկվել Վարորդական իրավունքից:

6. Ի՞նչ է իրենից ներկայացնում տեսական քննությունը:

Գերմանիայում վարորդական իրավունք ստանալու համար պետք է հանձնել է տեսական քննություն, որից հետո նոր կարող ես գրանցվել գործնական քննությանը: Տեսական քննությունը լինում է տարբեր լեզուներով, ցավոք ոչ հայերենով, բայց հասանելի է ռուսերեն լեզվով տարբերակը: Տեսական քննությունը բաղկացած է 30 հարցից: Ներկայացված երեք տարբերակներից պետք է ընտրել ճիշտ տարբերակը՝ հնարավոր է երեքն էլ ճիշտ լինեն:

Հարցերը տարբերվում են ըստ իրենց բարդության, ըստ դրա էլ գնահատվում է հարցի բալը: Սխալվելու երեք հնարավորություն կա բայց այն չպետք է գերազանցի 11 բալը:

Ավտոդպրոցում գրանցվելը թույլ է տալիս ապագա վարորդներին ձեռք բերել քննությանը պատրաստվելու համար նախատեսված հարցաթերթիկները, իսկ հետագայում՝ հրահանգչի հետ գործնական քննությանը վերապատրաստվելու հնարավորություն:

Ավտոդպրոցում են կազմակերպում ուսանողի տեսական քննության գրանցումը, պետք է նշել, որ քննության մասնակցելու արժեքը, ինչպես արդեն նշվեց, մոտ 25 եվրո է:

Կարևոր նշում.

Տեսականի քննության ժամկետը ուժի մեջ է ստանալուց մինչ մեկ տարի: Եթե գործնական քննությունը մինչ այդ չհանձնես, ապա պետք է տեսական քննությունը վերահանձնել:

Գործնական քննությունը հանձնելուց անմիջապես հետո տրվում է վարորդական իրավունքի քարտը կամ որոշ տարածքում տրամադրում են ժամանակավոր փաստաթուղթը, որից հետո երկուսից չորս շաբաթվա ընթացքում քարտը նամակի տեսքով ուղարկվում է ստացողի հասցեին:

Վերջում որպես ավելացում նշեմ, որ վարորդական իրավունքը ստանալուց հետո, պետք է առավել մեծ ուշադրություն դարձնել նրա պահպանմանը, քանզի մի քանի կոպիտ խախտում կատարելուց հետո, ճանապարհային ոստիկանությունը կարող է այն վերցնել ձեզանից, և այլևս դուք հնարավորություն չեք ունենա այն երկար տարիներ վերականգնելու: